**ՆԱԽԱԳԻԾ**

**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի  Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  Շ Ի Ր Ա Կ Ի  Մ Ա Ր Զ**
**Գ Յ Ո Ւ Մ Ր Ի  Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի  Ա Վ Ա Գ Ա Ն Ի**
**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

«_____»_____ 2025 **թվականի** N ____ -Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-Ի N 79-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի հուլիսի 29-ի «Գյումրի համայնքում ավտոկայանատեղի տուրքի վճարման և դրա ու ավտոկայանատեղի նկատմամբ հսկողության իրականացման ձևերը սահմանելու մասին» N 79-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման նախաբանում նշված «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» բառերը փոխարինել «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» բառերով,
2) ամբողջ որոշման մեջ «տուրք» բառը և դրա հոլովաձևերը փոխարինել «վճար» բառով և դրա հոլովաձևերով,
3) որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

« Ավտոկայանատեղ կազմակերպելու իրավասությունը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացված

մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (այսուհետ՝ կազմակերպիչ) վերապահելու դեպքում վերջիններս իրականացնում են սույն կարգով սահմանված հսկողությունն ավտոկայանատեղի տուրքի վճարման և դրա ու ավտոկայանատեղի նկատմամբ՝ Գյումրու քաղաքապետի հետ կնքվող պայմանագրին համապատասխան: »

4) որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 5-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

« 5) ընթացիկ տարվա մեկ ժամվա վճարը վճարվում է հետևյալ կերպ՝ ավտոկայանատեղում կայանելու պահից մինչև 15 րոպե տեղական վճար չի վճարվում, իսկ 15 րոպեից ավելի կայանելու համար վճարվում է Գյումրի համայնքի ավագանու համապատասխան որոշմամբ մեկ ժամվա համար սահմանված տեղական վճարի դրույքաչափը: »

5) որոշման նախաբանում «ղեկավարվելով» բառից հետո լրացնել ««Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի» բառերը,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կ. ՄԱԼԽԱՍՅԱՆ**

**Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

**Հ. ՂԱԶԱՐՅԱՆ**

**Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**Դ. ՄԱՆՎԵԼՅԱՆ**

**Կ. ՄԽԻԹԱՐՅԱՆ**

**Ա. ՄԿՐՏՉՅԱՆ**

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
# « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-Ի N 79-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

**Կարգավորման ենթակա խնդրի սահմանումը և առկա իրավիճակը.**

«Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-221-Ն օրենքի վերնագրում, 2021 թվականի հունվարի 20-ին, կատարվել է փոփոխություն և օրենքը վերանվանվել է «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» անվանմամբ: Ըստ այդմ անհրաժեշտություն է առաջացել ապահովել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի հուլիսի 29-ի N 79-Ա որոշման համապատասխանությունը գործող օրենսդրությանը:

Խնդիրն է՝ ապահովել համայնքի կողմից սահմանված ավտոկայանատեղերի տեղական վճարի հավաքագրումն ու դրա նկատմամբ հսկողության արդյունավետ իրականացումը՝ կարգավորելով վճարողների ու ավտոկայանատեղ կազմակերպելու իրավասություն ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց միջև իրավահարաբերությունները:

**Կարգավորման նպատակները և ակնկալվող արդյունքը.**

Այս իրավական ակտի նպատակն է՝ հստակեցնել և կանոնակարգել համայնքի տարածքում ավտոկայանատեղերի վճարի վճարման ընթացակարգը: Կարգի ներդրման արդյունքում ակնկալվում է՝ բարելավել ավտոկայանատեղերի կազմակերպման կառավարման մակարդակը:

**Ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը.**

Սույն որոշման նախագիծը կրում է նորմատիվ բնույթ, որը սահմանում է վարքագծի կանոն՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի: Այն ապահովում է համայնքային իրավական հենք՝ տեղական վճարի գանձման և դրա նկատմամբ վերահսկողության իրականացման համար:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-Ի N 79-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի հուլիսի 29-ի N 79-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» որոշման ընդունմամբ Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում և նվազեցում չի նախատեսվում: